ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «30» մայիսի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 28-Ա

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը, ինչպես նաև 2017 թվականի մայիսի 02-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի N467-Ա/2 հրամանի 2-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության մրցույթի հայտերի ընդունման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հունիսի 07-ը ժամը 16.00 ներառյալ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ